

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ – 2016  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼ  
ՀԱՐՑԱՏՈՄՍ

12 - րդ դասարան

I. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴԴԱՆՔՆԵՐ (17 միավոր)

1) «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (12 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը. 1 – 8 – րդ առաջադրանքներ: (0,25 X 8 = 2 միավոր)

1. Ե՞րբ են տեղի ունեցել Ռևանդուզի կոիվները.

- |                           |                           |
|---------------------------|---------------------------|
| 1) 1916 թ. մայիսի 16 – ին | 3) 1915 թ. մայիսի 16 - ին |
| 2) 1915 թ. մայիսի 15 – ին | 4) 1916 թ. մայիսի 15 – ին |

2. Ո՞վ էր Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի առաջին նախագահը.

- |                   |                          |
|-------------------|--------------------------|
| 1) Սարգիս Կասյանը | 3) Ալեքսանդր Մյասնիկյանը |
| 2) Աղասի Խանջյանը | 4) Ասքանազ Մռավյանը      |

3. Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին.

*«Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին, որոնք տարապարտ կերպով եկել են մեր դեմ և կամենում են հափշտակել մեր երկիրը»:*

Ո՞վ էր գլխավորում վերոհիշյալ խոսքերն ասած քաղաքի բնակիչների հերոսական պաշտպանությունը.

- |                      |                       |
|----------------------|-----------------------|
| 1) Գրիգոր Պահլավունի | 3) Վահրամ Պահլավունի  |
| 2) Լիպարիտ սպարապետ  | 4) Կոստանդին սպարապետ |

4. Երկրամասը կառավարելու համար Նժդեհի ղեկավարությամբ ստեղծված մարմինը կոչվում էր՝

- 1) Զանգեզուրի գյուղացիության ժամանակավոր խորհուրդ
- 2) Զանգեզուրի բանվորական ժամանակավոր խորհուրդ
- 3) Զանգեզուրի միացյալ խորհուրդ
- 4) Զանգեզուրի կոմիտե

5. Ո՞ր շարքում ընդգրկված բոլոր բնակավայրերն են հայրենադարձների համար կառուցվել և հետագայում ներառվել Երևանի վարչական տարածքի մեջ.

- 1) Նոր Արաբկիր, Նոր Բուրժանիա, Նոր Սեբաստիա, Նոր Խարբերդ, Նուբարաշեն



**2. Հայ գիտնականների անունները համապատասխանեցնել իրենց գործունեության բնագավառին:**

1. երկրաբանություն
2. պատմագիտություն
3. ֆիզիկա
4. քիմիա
5. լեզվաբանություն
6. ֆիզիոլոգիա

1	2	3	4	5	6

- ա. Մկրտիչ Ներսիսյան
- բ) Գուրգեն Սևակ
- գ) Մխիթար Ջրբաշյան
- դ) Արտեմ Ալիխանյան
- ե) Լևոն Ռոտինյան
- զ) Տիգրան Ջրբաշյան
- է) Լևոն Օրբելի

**3. Հայ մշակույթի գործիչների անունները համապատասխանեցնել իրենց գործունեության ժամանակաշրջանին.**

1. Արիստակես Լաստիվերցի
2. Մատթեոս Ուռհայեցի
3. Ստեփանոս Տարոնեցի
4. Թովմա Արծրունի
5. Մովսես Կաղանկատվացի
6. Ղևոնդ Վարդապետ

- ա. X դ. երկրորդ կես XI դ. սկիզբ
- բ. VIII դ.
- գ. VII-VIII դդ.
- դ. XI դ.
- ե. X դ.
- զ. IX դ. երկրորդ կես X դ. սկիզբ
- է. XI-XII դդ.

1	2	3	4	5	6

**4. Ո՞ր իրադարձությունն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը:**

- ա. Աշոտ Բագրատունու օծվելը հայոց թագավոր
- բ. Սմբատ I-ի և Բյուզանդիայի միջև պայմանագրի կնքումը

- գ. Ջաքարիա Չագեցու գլխավորությամբ հայ նախարարների հատուկ ժողովի գումարումը
- դ. Սևանի ճակատամարտը
- ե. Խալիֆի կողմից Աշոտ II-ին շահնշահ ճանաչելը
- զ. Անիի հռչակումը մայրաքաղաք
- է. Վանանդի թագավորության հիմնադրումը

**5. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա) Մառիի ճակատամարտը
- բ) Բերդուսի ճակատամարտը
- գ) Մանազկերտի ճակատամարտը
- դ) Հեթում I-ի կողմից հայ-մոնղոլական պայմանագրի կնքումը
- ե) Միրիոկեֆալոնի ճակատամարտը
- զ) Սարգիս Ջաքարյանի՝ ամիրսպասալարի պաշտոն ստանալը

1	2	3	4	5	6

**6. Հայաստանի առաջին հանրապետության շրջանի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա) Երդվյալ ատենակալների դատարան հիմնելու մասին օրենքի ընդունումը
- բ) Հողի մասին օրենքի ընդունումը
- գ) Արմենկոմի ստեղծումը
- դ) Վրաստանի զինված ուժերի կողմից Բորչալուի և Ախալքալաքի գավառների ռազմակալումը
- ե) Անդրանիկի հռչակվելը Չանգեզուրի գերագույն զինվորական հրամանատար
- զ) Հայկական լեգեոնի մասնակցությունը Արարայի ճակատամարտին

1	2	3	4	5	6

**գ. *Լրացնել պատասխանը:* (1 X 4 = 4 միավոր)**

**1. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. Միջին Ասիայում հոների դեմ պատերազմով զբաղված լինելով՝ Պերոզ արքան առժամանակ խուսափում էր հայ հայրենասիրական ուժերին բացահայտորեն հալածելու քաղաքականությունից:

բ. Իրեն ուղղված մեղադրանքներին աննկուն կերպով պատասխանելով՝ Գյուտ կաթողիկոսը, սակայն, ստիպված էր համաձայնելու Պերոզ արքայի՝ իրեն արված դավանափոխության առաջարկին:

գ. Հայաստանում հակապարսկական ապստամբության բռնկվելու ազդանշան էր հանդիսացել ուրացյալ Աշուշա բդեշխի սպանությունը վրաց թագավոր Վախթանգ Գորգասալի կողմից:

դ. Խոսքովակերտ անտառից մինչև Ջրվեժի լեռները ռազմական կարգով դասավորված պարսից զորքերի վրա հարձակված հայոց հեծելազուննոր ճեղքում է պարսից գնդի մի թևը և շատերին կոտորում:

ե. Ներսեհապատի ճակատամարտից առաջ հայոց զորքերին ոգևորիչ ճառ է արտասանում Գյուտ կաթողիկոսը, և ճակատամարտն ավարտվում է հայերի հաղթանակով:

զ. Երբ Վահան Մամիկոնյանը հայ նախարարների հետ գտնվում էր Խաղտիքում, հայոց մարզպան Շապուհը հարձակվում է Շաղագոմ գավառում գտնվող ապստամբների մի խմբի վրա:

է. Ներսեհ և Հրահատ Բագրատունիները Մուշեղ Մամիկոնյանի հետ իրենց ջոկատով միացել էին Վահան Մամիկոնյանի զորքին և Արծափ գյուղի մոտ ջախջախում են պարսից զուննոր:

ը. Դամասկոսում հայոց իշխան Համագասպ Մամիկոնյանը Մուավիայից միաժամանակ ստացել է Հայաստանի, Վիրքի և Աղվանքի՝ մինչև Ճորա պահակն ընկած տարածքների վրա իշխանություն:

թ. Հայոց իշխան Սմբատ Բագրատունին Հայաստան ներխուժած արաբական զորքին պարտության է մատնել, սակայն թշնամուն հետապնդելու ժամանակ ինքը ևս զոհվել է:

ժ. Արևմտյան Հայաստանի հայրենասիրական ուժերը համախմբվելով ջախջախեցին ՄԺԺ Գնունուն, իսկ երկրի զորավարությունը ստանձնեց Դավիթ Սահառունին, որը կայսրից ստացավ «պատրիկ-կյուրապաղատի» աստիճան և ճանաչվեց հայոց իշխան:



## 2. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

ա) 1920–ական թվականների սկզբին ամենամարդաշատ հայկական գաղթօջախները Ֆրանսիայում և ԱՄՆ–ում էին, որոնց պետությունների բարեկամական վերաբերմունքի շնորհիվ ապաստան գտան հարյուր հազարավոր հայեր:

բ) Հայկական բարեգործական ընդհանուր միությունը նյութական մեծ օժանդակություն ցուցաբերեց արևմտահայ գաղթականներին, սփյուռքի կրթական գործին, հայրենադարձության կազմակերպմանը, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի տնտեսական և մշակութային զարգացմանը:


գ) Վերջին անգամ Հայկական հարցը քննարկվեց Սևրում և որոշվեց ստեղծել «ազգային օջախ»:

դ) Սփյուռքում 1921–1990 թթ. կարևոր դերակատարում ունեին հայ ավանդական կուսակցությունները, որոնց գործունեության առաջնային թիրախները Հայկական հարցի լուծումը և ցեղասպանության միջազգային ճանաչումն էին:

ե) Հայկական հարցի արդարացի և վերջնական լուծման ամբողջ ծանրությունն իր վրա վերցրեց խորհրդային պետությունը:

զ) Նյու Յորքում կայացած Հայկական համաշխարհային կոնգրեսը, ներգաղթի կազմակերպման, Հայրենիք–Սփյուռք կապերի ամրապնդման հարցերը քննարկելուց բացի, փաստաթուղթ պատրաստեց հայկական հողային պահանջների վերաբերյալ և ներկայացրեց ԱՄՆ–ի նախագահ Ռուզվելտին:

է) Հայաստանի այն մասում, որտեղ վերականգնվեց և պահպանվեց հայկական պետականությունը, ավելի քիչ հայ բնակչություն կա, քան նրա սահմաններից դուրս:



### 3. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա) Ժնևի համալսարանի մի խումբ արևելահայ ուսանողներ հետևելով «Կոլոկոլ» թերթի օրինակին՝ 1887 թ. հիմնադրած իրենց պաշտոնաթերթը կոչել են «Հնչակ»:
- բ) 1898 թ. աշնանը «Հնչակ» թերթում հրատարակվել է Հնչակյան կուսակցության ծրագիրը:
- գ) Հնչակյան կուսակցության ծրագրում որպես հեռավոր նպատակ սահմանվել է Արևմտյան Հայաստանի ազատագրումը թուրքական բռնապետությունից:
- դ) Հայ քաղաքական մտքի պատմության մեջ հնչակյաններն առաջինն են, որ Հայկական հարցի լուծումը համարել են ամբողջական հայրենիքում պետության վերաստեղծումը:
- ե) 1898 թ. Հնչակյան կուսակցությունը պառակտվել է երկու թևի՝ սոցիալիստական և ազգային:

--	--

### 4. Գտնել երկու ճիշտ պնդումները.

ա. Հայաստանում կենտրոնացված պետության ստեղծման գլխավոր խոչընդոտ հանդիսացավ Բյուզանդական կայսրությունը, որը, տիրելով երկրի մեծ մասին, վերջ տվեց նաև Անիի Բագրատունյաց թագավորությանը:

բ. Պատմական աղբյուրների համաձայն՝ XI դ. սկզբին Սյունիքն ուներ 8 քաղաք, 72 ամրոց ու բերդ, 40 վանք և 1000-ից ավելի գյուղ ու ավան, իսկ բնակչության թիվը հասնում էր մոտ 1 միլիոնի:

գ. Տաշիր-Ձորագետի թագավորությունն իր հզորության գագաթնակետին հասավ Կյուրիկե I-ի՝ մոտ 60 տարի տևած կառավարման շրջանում, երբ թագավորության տարածքը զգալիորեն ընդարձակվեց Թիֆլիսի և Գանձակի ամիրայությունների հաշվին:

դ. Բագրատունյաց թագավորության կործանումը ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի համար, և հայ ժողովուրդը դարեր շարունակ բուն երկրում կորցրեց իր միասնական ու լիակատար անկախ պետականությունը:

ե. Վրաց թագավորի և Վահրամ Պահլավունու միջնորդությամբ կայացած հաշտության համաձայն՝ Աշոտ IV-ը ստացավ Անի քաղաքը և Շիրակը, իսկ Հովհաննես-Սմբատը ժառանգեց հոր գահը և ստացավ Սևանի ավազանը, Գուգարքը և մի շարք այլ գավառներ:

զ. Բյուզանդական Կոստանդին Մոնոմախ կայսրը Սենեքերիմ Արծրունուն հարկադրեց կայսրությանը հանձնել Վասպուրականը, որի փոխարեն ստացավ Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքն իր շրջակայքով:

է. Անիի Բագրատունիներին ենթակա Վանանդի թագավորությունը համեմատաբար երկար կյանք ունեցավ և մեծ վերելք ապրեց Վասակ թագավորի օրոք ու իր գոյությունը պահպանեց մոտ երկու հարյուր տարի:

--	--

**դ) Պնդումների փունջ (0,5 X 6 = 3)**

*Փնջի պնդումները ստուգվում են հետևյալ սկզբունքով. յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 0,5 միավոր, սխալ պատասխանի համար ոչ միայն միավոր չի տրվում, այլև հանվում է նա 0,5 միավոր, չգիտեմ պատասխանի դեպքում միավոր չի տրվում:*

**1. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Ն. Բանը կլասիցիզմի ոճով կառուցել է Բաքվի Մայիլովի անվան հայկական թատրոնի շենքը:
- 2) Կ.Պոլսում ստեղծվել է առաջին կամերային (սենեկային) նվագախումբը Հարություն Մինանյանի գլխավորությամբ:
- 3) 1950-1970-ական թթ. Հայկական գեղանկարչության ամենաբնորոշ գծերն էին ավանդական ժանրերի միաձուլումը, մարդկանց և բնապատկերի համադրումը:
- 4) Ռուսաստանի կողմից Օսմանյան կայսրությունից նվաճված տարածքի հայկական մասը առաջին անգամ «Թուրքահայաստան» է կոչվել ժամանակավոր կառավարության որոշմամբ:
- 5) Միջնադարին բնորոշ է ավատատիրական խոշոր տնտեսության՝ տերունի մեծածավալ կալվածքների առաջացումը:
- 6) Տիգրան Մեծի կառուցած «Արքայական ճանապարհը» միմյանց էր կապում Արտաշատը, Տիգրանակերտը և Անտիոքը:

	1	2	3	4	5	6
ճիշտ է						
սխալ է						
չգիտեմ						

**2) «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (5 միավոր)**

**ա. Նշել ճիշտ պատասխանը. 1 – 4 – ըն առաջադրանքներ: (0,5 X 4 = 2 միավոր)**

**1. Ե՞րբ է սկսվել Հարյուրամյա պատերազմը.**

- |            |            |
|------------|------------|
| 1) 1353 թ. | 2) 1453 թ. |
| 3) 1337 թ. | 4) 1437 թ. |

**2. Ե՞րբ է Նապոլեոն Բոնապարտը հռչակվել կայսր:**

- |            |            |
|------------|------------|
| 1) 1799 թ. | 3) 1814 թ. |
| 2) 1804 թ. | 4) 1815 թ. |

**3. Ե՞րբ են վեատգոթերն Ալարիխի գլխավորությամբ գրավել Հռոմը.**

- 1) 451 թ.
- 2) 378 թ.
- 3) 395 թ.
- 4) 410 թ.

**4. Ո՞ր իրադարձություններն են տեղի ունեցել 1945 թ.:**

- 1) ՄԱԿ-ի ստեղծումը, Պոտսդամի համաժողովը, ֆաշիստական Գերմանիայի լիակատար պարտությունը, Հիրոսիմա և Նագասակի քաղաքների ատոմային ուժահարումը, Երկրորդ աշխարհամարտի ավարտը
- 2) ՄԱԿ-ի ստեղծումը, Յալթայի համաժողովը, ֆաշիստական Գերմանիայի լիակատար պարտությունը, սառը պատերազմի սկիզբը, Նյուրնբերգյան դատավարությունը, Երկրորդ աշխարհամարտի ավարտը
- 3) ՄԱԿ-ի ստեղծումը, Պոտսդամի համաժողովը, ֆաշիստական Գերմանիայի լիակատար պարտությունը, Սառը պատերազմի սկիզբը, Երկրորդ աշխարհամարտի ավարտը
- 4) ՄԱԿ-ի ստեղծումը, Յալթայի համաժողովը, Երկրորդ ճակատի բացումը Եվրոպայում, Հիրոսիմա և Նագասակի քաղաքների ատոմային ուժահարումը, Երկրորդ աշխարհամարտի ավարտը

*բ. Լրացնել պատասխանը:* (1 X 2 = 2 միավոր)

**1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

(1 միավոր)

- ա. Միջազգային օլիմպիական կոմիտեի ստեղծումը
- բ. ԱՄՆ-ի Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելը
- գ. Ռուսաստանյան առաջին հեղափոխությունը
- դ. Միջազգային կարմիր խաչի ընկերության ստեղծումը
- ե. «Սրտագին համաձայնության» (Անտանտի) կնքումը
- զ. Օսմանյան գորքերի ջախջախումը Սարիղամիշի ճակատամարտում

1	2	3	4	5	6

**2. Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

(1 միավոր)

- ա) Կուրսկի
- բ) Լայպցիգի
- գ) Վերդենի
- դ) Ստալինգրադի
- ե) Բորոդինոյի
- զ) Մառն և Էն գետերի
- է) Մոսկվայի

1	2	3	4	5	6	7



**գ. Լրացնել պատասխանը: (0,5 X 2 = 1 միավոր)**

**1. Բերված փաստարկներից ընտրել 2-ը, որոնք հանդիսանում են Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հետևանք.**

ա. Խորհրդային Ռուսաստանը հրաժարվում էր Լեհաստանից, Ֆինլանդիայից, Բելառուսիայի մի մասից, Ուկրաինայից և Մերձբալթյան երկրներից:

բ. Գերմանիան ընդունում էր իր պարտությունը և զորքերը դուրս բերում ռուսական ռազմակալված տարածքներից:

գ. Ռուսաստանը պարտավորվում էր վճարել 6 միլիոն ոսկի մարկ ռազմատուգանք:

դ. Գերմանիան պարտավորվում էր փոխհատուցել հաղթող երկրների նյութական վնասները:

ե. Օսմանյան Թուրքիային էին տրվում ո՛չ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Սուրմալուն, Նախիջևանը, Կարսն ու Արդահանը:

զ. Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Արևմտյան Հայաստանում ստեղծվում էր ժամանակավոր վարչություն:

է. Օսմանյան Թուրքիան պարտավորվում էր դադարեցնել գաղտնի բանակցությունները Մեծ Բրիտանիայի հետ:

--	--

**II. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐՄԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (3 միավոր)**

**1. Ներկայացրե՛ք և մեկնաբանե՛ք Արցախյան ազատագրական պատերազմի ծավալումը, հետագա ընթացքն ու ավարտը: Ի՞նչ նշանակություն ունեցան Շուշիի և Լաչինի հաղթական գործողությունները: Ինչպե՞ս եք պատկերացնում Արցախյան հիմնախնդրի լուծումը. ներկայացրե՛ք և հիմնավորե՛ք ձեր տեսակետը:**

**Է. Մինասյան**  
**Պատմության հանձնաժողովի նախագահ,**  
**պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

12. 04. 2016 թ.